«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
«Անի ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ academy_ani@yahoo.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30.10.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան
	Նարեկ Ադամյան
	Դավիթ Բակլաչյան
	Նազելի Արսենյան

Վարույթ՝ 12Մ1-008

Խախտում՝

1. «Անի ՖԱ» ՀԿ փոխնախագահ Ժորա Հովհաննիսյանի կողմից խաղը սպասարկող գլխավոր մրցավարին հարվածելը (Հավելված 1 Ե, 28-րդ կետ)
2. Առանց հարգելի պատճառների ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստին հրավիրված «Անի ՖԱ» ՀԿ փոխնախագահ Ժորա Հովհաննիսյանի չներկայանալը (38-րդ հոդված, 4-րդ կետ)
3. «Անի-14-1» թիմի գլխավոր մարզիչ Անդրանիկ Գալստյանի գործողությունների արդյունքում խաղն անավարտ թողնելը (Հավելված 1 Ե, 15-րդ կետ)
4. «Անի ՖԱ» ՀԿ մանկապատանեկան մարզիչ Կարեն Ալավերդյանի (60116) կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելը (Հավելված 1 Ե, 27-րդ կետ)
5. Խաղի ժամանակահատվածում դաշտի տեր ակումբի անվտանգության աշխատակիցների թերի աշխատանք կատարելը (Հավելված 1 Ե, 30-րդ կետ)

Առաջնություն՝ ՀՀ ֆուտբոլի 2025-2026թթ. մինչև 12տ. մանկապատանեկան առաջնություն

Խաղ՝ «Անի-14-1» - «Աբովյան Ակադեմիա-14», 06.10.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 4-րդ հոդվածի 1-ին կետի 1.8 ենթակետով՝ «Անի ՖԱ» ՀԿ փոխնախագահ Ժորա Հովհաննիսյանի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել մարզադաշտ մուտք գործելու արգելք՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Պատասխանատվության միջոցի կիրառումը տարածվում է 2025 թվականի հոկտեմբերի 31-ից սկսած ՀՖՖ հովանու ներքո անցկացվող առաջնությունների բոլոր հանդիպումների վրա:
   «Անի ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:
2. «Անի ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
3. «Անի-14-1» թիմի գլխավոր մարզիչ Անդրանիկ Գալստյանին զրկել ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից 5 (հինգ) ամիս ժամկետով: Պատասխանատվության միջոցի կիրառումը տարածվում է 2025 թվականի հոկտեմբերի 31-ից սկսած ՀՖՖ հովանու ներքո անցկացվող առաջնությունների բոլոր հանդիպումների վրա:
   Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 4 (չորս) ամիսը, պայմանականորեն չկիրառել: «Անի-14-1» թիմի գլխավոր մարզիչ Անդրանիկ Գալստյանի նկատմամբ փորձաշրջան սահմանել 4 (չորս) ամիս ժամկետով՝ մինչև 2026 թվականի փետրվարի 28-ը ներառյալ:
   «Անի ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով:
   «Անի-14-1» թիմի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նախազգուշացում»:
4. «Անի ՖԱ» ՀԿ մանկապատանեկան մարզիչ Կարեն Ալավերդյանին (60116) զրկել ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից 6 (վեց) խաղով: Պատասխանատվության միջոցի կիրառումը տարածվում է 2025 թվականի հոկտեմբերի 31-ից սկսած ՀՖՖ հովանու ներքո անցկացվող առաջնությունների բոլոր հանդիպումների վրա :
   Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 3 (երեք) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Անի ՖԱ» ՀԿ մանկապատանեկան մարզիչ Կարեն Ալավերդյանի (60116) նկատմամբ փորձաշրջան սահմանել 1 (մեկ) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը ներառյալ:
   «Անի ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
5. «Անի ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի՝ 25,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: